ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 12.09.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-40/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-40/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 23.08.2013թ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-40/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հայտնել է, որ «ՇՀԱՊՁԲ-11/8-ԵԻՊՔ13/1» ծածկագրով գնման ընթացակարգի Հրավերի հավելված N 1-ում՝ տեխնիկական բնութագրի 4-րդ չափաբաժնում պարզ և հստակ նշված են ստորև բերված աղյուսակի 2-րդ սյունյակում նշված բնութագրերը:

Չափաբաժնի համարը	«ՇՀԱՊՁԲ-11/8-ԵԻՊՔ13/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի 4-րդ չափաբաժնով պահանջվող սարքավորման տեխնիկական բնութագիրը	«Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից «ՇՀԱՊՁԲ-11/8-ԵԻՊՔ13/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի 4-րդ չափաբաժնով առաջարկված սարքավորման տեխնիկական բնութագիրը
4	Ինտերակտիվ գրատախտակ (Interactive whiteboard)	Ինտերակտիվ գրատախտակ Interactive whiteboard (IWB) Eno classic 2610
	Active Screen Area WxH (156.5 cm x 117.3 cm)	Active Screen Area WxH (158.9 cm x 119.2 cm)

	Diagonal–77”(195.6 cm)	Անկյունագիծը/Diagonal–78”(198.6 cm)
	Touch resolution–4.096 x 4.096	Ոչ
	USB 2.0 active extension cable (5m)	Ոչ
	4:3 Aspect Ratio	4:3 Aspect Ratio

1) eno classic 2610 գրատախտակը նախկինում արտադրվում էր PolyVision Corp. (USA) ընկերության կողմից, որը 2012թ. վաճառել է գրատախտակների ստորաբաժանումը նույնպես ամերիկյան Steelcase Inc. ընկերությանը:

Ներկայիս արտադրողի WEB կայքում բացակայում են նշված գրատախտակի վերաբերյալ որևիցե տեխնիկական տվյալներ (բացառությամբ ֆիզիկական չափերի) և որևիցե երաշխիքային սպասարկման ժամկետի մասին:

Վերը նշված արտադրողների կողմից պաշտոնապես հրատարակված eno classic 2610 գրատախտակի բնութագրերը կցված են նույն բողոքին:

2) eno classic 2610 գրատախտակը ներկայացնում է իրենից միայն մեկ հատ ինտերակտիվ էլեկտրոնային գրիչ, որն ընդունակ է աշխատել ցանկացած ուղղահայաց մակերեսի վրա:

Համապատասխանաբար, գրիչի հետ մատակարարվող գրատախտակն իրենից ներկայացնում է սովորական մետաղակերամիկական գրատախտակ, չունի որևիցե էլեկտրական մաս, ոչ մի սարքի հետ չի կարող միանալ և բնական է, չի կարող ունենալ հպումազգայուն մակերես:

3) Ինչպես նշվել է վերահիշյալ 2-րդ կետում՝ eno classic 2610 գրատախտակը չունի հպումազգայուն մակերես և համապատասխանաբար չի կարող ունենալ հպման զգայունություն (Touch resolution) 4.096 x 4.096, ինչպես նշված է «ՇՀԱՊՁԲ-11/8-ԵԻՊՔ13/1» ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրում:

4) Ինչպես նշվել է վերահիշյալ 2-րդ կետում՝ eno classic 2610 գրատախտակը չունի որևիցե էլեկտրական մաս, ոչ մի սարքի հետ չի կարող միանալ և համապատասխանաբար չի կարող ունենալ USB 2.0 active extension cable (5 m), ինչպես նշված է «ՇՀԱՊՁԲ-11/8-ԵԻՊՔ13/1» ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրում:

5) Ութ միավորից բաղկացած նմանատիպ Averpen գրիչների կոմպլեկտ արտադրված Aver Information Inc. ընկերության կողմից վաճառվում է Հայաստանում $800 համարժեք ՀՀ դրամով (մեկ գրիչի արժեքը այս դեպքում կազմում է ընդամենը $100 համարժեք ՀՀ դրամ) և առկա է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ցուցասրահում:

Համապատասխանաբար, eno classic 2610 գրատախտակը չի համապատասխանում վերը նշված ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մինիմալ տեխնիկական պահանջներին (Touch resolution 4.096 x 4.096 և USB 2.0 active extension cable 5 m) և միանշանակ ենթակա էր մերժման գնահատող հանձնաժողովի կողմից:

Վերոհիշյալ համգամանքների մասին պատվիրատուն մանրամասնորեն տեղեկացվել էր նույն թվականի օգոստոսի 9-ին էլեկտրոնային նամակով (կցված է բողոքին), սակայն նշված նամակում բերված տեխնիկական փաստերը անհայտ պատճառով լիովին անտեսվել են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ելնելով վերոգրյալից «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գտնում է, որ պատվիրատուն դիտավորյալ և ուղղակիորեն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները և ներկայացրել է պահանջ չեղյալ հայտարարել «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «ՇՀԱՊՁԲ-11/8-ԵԻՊՔ13/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնահատող հանձնաժողովի 15.08.2013թ. N 11/8-3 արձանագրության 1-ին կետի՝ «Կոմպասս» ՍՊԸ-ին ընթացակարգի 4 չափաբաժնի մասով հաղթող ճանաչելու որոշումը:

2. <u>«Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 28.08.2013թ. N 04/032-1202 գրությամբ դիմել է «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 23.08.2013թ. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը 02.09.2013թ. N 34 գրությամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

Նույն թվականի օգոստոսի 12-ին և 13-ին ընթացակարգի բոլոր 10 մասնակիցներին, այդ թվում և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին, էլեկտրոնային փոստով ուղարկվել են բացման նիստի

արձանագրությունները և մրցույթի ամփոփիչ արդյունքները: Ընթացակարգի 9 մասնակիցները ստացել են այդ էլեկտրոնային նամակը, իսկ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հեռախոսազանգով հայտարարել է, որ նշված նամակը չի ստացել: Այդ պատճառով օգոստոսի 22-ին ուղարկվել է նոր նամակ, էլեկտրոնային հասցեով ուղարկվել են բոլոր նշված փաստաթղթերը: Նշված բոլոր նամակները պահպանվել են քոլեջի համակարգչում:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի բողոքում բարձրացված «Կոմպասս» ՍՊԸ-ի 4-րդ չափաբաժնով ներկայացված և պատվիրատուի կողմից առաջարկված տեխնիկական բնութագրերի անհամապատասխանությունների կապակցությամբ բերվել է հետևյալ աղյուսակը.

Չափաբաժին	**Ինտերակտիվ գրատախտակ**	**«Կոմպասս» ՍՊԸ**	**«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ**
4		Eno classic 2610	
Ակտիվ մակերես	WxH (156.5cm x 117.3 cm)	WxH (159cm x 119.1cm) համարժեք	WxH (156.5cm x 117.3cm)
Անկյունագիծ	77”	78” համարժեք	77”
Touch resolution	4.069x4.096	8000x8000-նայել փաստաթուղթը համարժեք	4.096x4096
Interface	USB 2.0 active extension cable (5m) կամ համարժեք	USB 2.0 bluetooth համարժեք	USB 2.0 active extension cable (5m)
Գինը		505.500	630.780

Առաջարկվող ինտերակտիվ գրատախտակի տեխնիկական բնութագրերը ներկայացվել են «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից և համապատասխանում են Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջներին: Երաշխիքային ապասարկման ժամկետը (2 տարի) նշվելու էր համապատասխան պայմանագրի մեջ, որը դեռևս չէր կնքվել:

Eno classic 2610 ինտերակտիվ գրատախտակը ստեղծված է միկրոկետային տեխնոլոգիայով, ինչը թույլ է տալիս որոշել էլեկտրոնային գրչի կոորդինատները և փոխանցել դրանք Bluetooth-ի միջոցով: Այդ գրատախտակի վրա միաժամանակ կարող են աշխատել 3 հոգի իրենց էլեկտրոնային գրիչներով: Մետաղակերամիկական գրատախտակի առավելություններից մեկը դիմացկունությունն է տարբեր ուժգնության հարվածների նկատմամբ: Գրատախտակի մակերեսը համարվում է հպումազգայուն միայն էլեկտրոնային գրչի նկատմամբ (այլ առարկաների հպումը մակերեսին արդյունավետ չէ):

«Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը նշել է նաև, որ տեխնիկական բնութագրում չի եղել գրատախտակի հետ այլ առարկաներով աշխատելու հնարավորության առկայությունը:

Այն, որ Eno classic 2610 ինտերակտիվ գրատախտակը չունի էլեկտրական մաս և չի պահանջում էլեկտրական սնուցում, «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը համարում է առավելություն:

Ելնելով վերոգրյալից, «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը գտնում է, որ բողոքարկողի կարծիքն այն մասին, որ Eno classic 2610 ինտերակտիվ գրատախտակը չի համապատասխանում ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մինիմալ տեխնիկական պահանջներին և պետք է մերժվեր գնահատող հանձնաժողովի կողմից՝ անհիմն է, գնահատող հանձնաժողովն ճիշտ ընտրություն է կատարել:

3. ԳԲԽ-40/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 23.08.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը մերժել և դադարեցնել «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-11/8-ԵԻՊՔ 13/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը 4-րդ չափաբաժնի մասով:

4. ԳԲԽ-40/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-40/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) կողմից 23.08.2013թ. ներկայացված բողոքը, «ՇՀԱՊՁԲ-11/8-ԵԻՊՔ13/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), «ՇՀԱՊՁԲ-11/8-ԵԻՊՔ13/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ»

ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին հասցեագրված 02.09.2013թ. N 34 գրությունը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

«Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՇՀԱՊՁԲ-11/8-ԵԻՊՔ13/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ), որի N 4-րդ չափաբաժնին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների հայտ են ներկայացրել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն և «Կոմպասս» ՍՊԸ-ն:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՇՀԱՊՁԲ-11/8-ԵԻՊՔ13/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել N 4-րդ չափաբաժնով «Կոմպասս» ՍՊԸ-ի հայտը բավարարել, որի ներկայացրած տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից սահմանված տեխնիկական բնութագրին:

Ընկերությունը հայտնել է նաև, որ «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած eno classic 2610 գրատախտակը ներկայացնում է իրենից միայն մեկ հատ ինտերակտիվ էլեկտրոնային գրիչ, որն ընդունակ է աշխատել ցանկացած ուղղահայաց մակերեսի վրա:

Համապատասխանաբար, գրչի հետ մատակարարվող գրատախտակը իրենից ներկայացնում է սովորական մետաղակերամիկական գրատախտակ, չունի որևիցե էլեկտրական մաս, ոչ մի սարքի հետ չի կարող միանալ և բնական է, չի կարող ունենալ հպումազգայուն մակերես: Eno classic 2610 գրատախտակը չունի հպումազգայուն մակերես և համապատասխանաբար չի կարող ունենալ հպման զգայունություն (Touch resolution) 4.096 x 4.096, որը սահմանված է եղել «ՇՀԱՊՁԲ-11/8-ԵԻՊՔ13/1» ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրով, ինչպես նաև չունի որևիցե էլեկտրական մաս, ոչ մի սարքի հետ չի կարող միանալ և համապատասխանաբար չի կարող ունենալ USB 2.0 active extension cable (5 m), որը ևս սահմանված է եղել «ՇՀԱՊՁԲ-11/8-ԵԻՊՔ13/1» ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրով:

«Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը 02.09.2013թ. N 34 գրությամբ Կենտրոնին ներկայացրել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքում «Կոմպասս» ՍՊԸ-ի N 4-րդ չափաբաժնով (ինտերակտիվ գրատախտակ) ներկայացված և պատվիրատուի կողմից առաջարկված տեխնիկական բնութագրերի անհամապատասխանությունների վերաբերյալ հետևյալ աղյուսակը.

Չափաբաժին	Ինտերակտիվ գրատախտակ	«Կոմպասս» ՍՊԸ	«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ
4		Eno classic 2610	
Ակտիվ մակերես	WxH (156.5cm x 117.3 cm)	WxH (159cm x 119.1cm) համարժեք	WxH (156.5cm x 117.3cm)
Անկյունագիծ	77”	78” համարժեք	77”
Touch resolution	4.069x4.096	8000x8000-նայել փաստաթուղթը համարժեք	4.096x4096
Interface	USB 2.0 active extension cable (5m) կամ համարժեք	USB 2.0 bluetooth համարժեք	USB 2.0 active extension cable (5m)
Գինը		505.500	630.780

Պատվիրատուն նշել է նաև, որ «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ինտերակտիվ գրատախտակի տեխնիկական բնութագրերը համապատասխանում են իրենց ներկայացրած պահանջներին:

«ՇՀԱՊՁԲ-11/8-ԵԻՊՔ13/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգի Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող տեխնիկական բնութագրի N 4-րդ չափաբաժնով սահմանվել է ինտերակտիվ գրատախտակի հետևյալ տեխնիկական ցուցանիշները՝ Active screen area W x H (156.5cm x 117.3cm), Diagonal – 77” (195.6cm), 4:3 Aspect Ratio Touch resolution – 4.096 x 4.096, USB 2.0 Active extension cable (5m) կամ համարժեք:

Կենտրոնում ս.թ. սեպտեմբերի 6-ին ժամը 15:00-ին ԳԲԽ-40/13 բողոքի շրջանակներում կազմակերպված բանավոր լսումների ընթացքում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացուցիչն ամբողջությամբ պնդեց իր կողմից ներկայացված բողոքը՝ հայտնելով, որ «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը «ՇՀԱՊՁԲ-11/8-ԵԻՊՔ13/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգի Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող տեխնիկական բնութագրի N 4-րդ չափաբաժնով սահմանել է ինտերակտիվ գրատախտակ Active screen area W x H (156.5cm x 117.3cm), Diagonal – 77” (195.6cm), 4:3 Aspect Ratio Touch resolution – 4.096 x 4.096, USB 2.0 Active extension cable (5m) տեխնիկական հատկանիշներով, սակայն հաղթող է ճանաչել «Կոմպասս» ՍՊԸ-ին, որի կողմից ներկայացված Eno classic 2610 մոդելը իրենից ներկայացնում է ինտերակտիվ գրիչ սովորական մետաղակերամիկական գրատախտակով, ինչն էլ Պատվիրատուի կողմից համարվել է համարժեք, այսինքն վերջինս սահմանել է մեկ բան, ընտրել է մեկ այլ բան: Բողոքաբեր կազմակերպությունը Ընթացակարգին «Կոմպասս»

ՍՊԸ-ի առաջարկած գնման առարկայի՝ Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերին անհամապատասխանությունը հիմնավորող ապացույց չներկայացեց:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է իրենց կողմից սահմանված տեխնիկական բնութագրին, սակայն դրանց համարժեքության վերաբերյալ բավարար ապացույցներ չներկայացեց:

Հանձնաժողովը բողոքի վերաբերյալ օբյեկտիվ որոշում կայացնելու նպատակով որոշում կայացրեց հանձնաժողովի հերթական լսումներին մասնակցելու նպատակով ծանուցել նաև «Կոմպասս» ՍՊԸ-ին:

Կենտրոնում ս.թ. սեպտեմբերի 9-ին ժամը 16:00-ին ԳԲԽ-40/13 բողոքի շրջանակներում կազմակերպված բանավոր լսումների ընթացքում «Կոմպասս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնց, որ իրենց կողմից ներկայացված հայտը համապատասխանել է «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից սահմանված տեխնիկական բնութագրին, սակայն Ընթացակարգին կազմակերպության հայտով առաջարկված գնման առարկայի՝ Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերին համապատասխանությունը հիմնավորող ապացույց չներկայացեց:

Պատվիրատուի ներկայացուցիչը հանձնաժողովին տրամադրեց տեսանյութ, և հավաստեց, որ տեսանյութում Պատվիրատուի ներկայացուցիչը փորձարկում է «Կոմպասս» ՍՊԸ-ի առաջարկած գրատախտակը և որում երևում են գրատախտակի կետայնությունը և գրատախտակի վրա նշումները կատարվում են միայն գրատախտակին էլեկտրոնային գրիչով հպվելու միջոցով: Բողոքաբեր կազմակերպությունը կարծիք հայտնեց, որ վստահություն չունի տեսանյութում փորձարկվող և «Կոմպասս» ՍՊԸ-ի առաջարկած գրատախտակների նույնականության վերաբերյալ: Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ «Կոմպասս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է իրենց կողմից սահմանված տեխնիկական բնութագրին, սակայն դրանց համարժեքության վերաբերյալ բավարար ապացույցներ, ինչպես նաև գնման առարկայի բնութագրերին Հրավերով նախատեսված համարժեքության որոշման չափանիշներ չներկայացեց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի.

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:
- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար,

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության հավասար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Այսպիսով գտնում ենք, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չեն պահպանվել Օրենքի 12-րդ հոդվածով սահմանված պահանջները, քանի որ Հրավերին կից պայմանագրի նախագծի N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագրի N 4-րդ չափաբաժնով սահմանված Active screen area W x H (156.5cm x 117.3cm), Diagonal – 77" (195.6cm), 4:3 Aspect Ratio Touch resolution – 4.096 x 4.096, USB 2.0 Active extension cable (5m) կամ համարժեք սահմանումը ամբողջությամբ և հստակ չի նկարագրում գնման առարկան և չի բացառում այլընտրանքային մեկնաբանությունը:

Գտնում ենք, որ «ՇՀԱՊՁԲ-11/8-ԵԻՊՔ13/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.08.2013թ. N 11/8-3 արձանագրության 1-ին կետով՝ «Կոմպասս» ՍՊԸ-ին ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով հաղթող ճանաչելու որոշումը չեղյալ հայտարարելու պահանջի վերաբերյալ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից Կենտրոնին 23.08.2013թ. ներկայացված բողոքը բավարարելու հիմքեր առկա չեն և առաջարկում ենք մերժել այն:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 23.08.2013թ. Կենտրոնին ներկայացված «ՇՀԱՊՁԲ-11/8-ԵԻՊՔ13/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.08.2013թ. N 11/8-3 արձանագրության 1-ին կետով՝ «Կոմպասս» ՍՊԸ-ին ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով հաղթող ճանաչելու որոշումը չեղյալ հայտարարելու պահանջի մասին բողոքը մերժել:

2. Դադարեցնել «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-11/8-ԵԻՊՔ 13/1» ծածկագրով

շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը 4-րդ չափաբաժնի մասով:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Արման Մնացականյան

Անդամ՝ Վահե Բաբայան